ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀՅՈՒՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՓԱՍՏԱԲՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ ՍԵՎԱԿ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

10.05.2016 10:06

Ֆրանսիայում դատաքննության ընթացքում կողմերը պատմուճան են հագնում: Ֆրանսիայում բնակվող մեր հայրենակից, Ֆրանսիայի փաստաբանների միության անդամ, փաստաբան Սևակ Թորոսյանը վստահ է, որ այս հագուստը պետք է կրեն նաև հայաստանյան դատարաններում. «Սա միայն սիմվոլիկ չէ, սևը խորհրդանշում է արդարադատություն և հավասարություն: Սա նշանակում է հավասարություն բոլոր կողմերի՝ փաստաբանի, մեղադրողի կամ դատավորի միջև»,- ասում է պարոն Թորոսյանը: Նրա հետ նաև զրուցել ենք ֆրանսիական փաստաբանական համայնքի ու դատական իշխանության մասին, Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրներից և հայ իրավաբանական մտքի զարգացման խոչընդոտներից:

- Պարոն Թորոսյան, խնդրում եմ ներկայացնել ֆրանսիական փաստաբանական համայնքը՝ համեմատություն կատարելով մեր երկրի նույն ինստիտուտի հետ:

- Ֆրանսիայում, կարծեմ, 55 հազար փաստաբաններ կան, Ֆրանսիայի փաստաբանների կեսը Փարիզի փաստաբանների պալատի անդամ են: Մնացածին «բարո» են ասում, մեծ քաղաքների բարոններ կան: Պալատը բավականին հզոր է, տարեկան 70 միլիոն եվրո բյուջե ունի, շուրջ 120 աշխատող: Փաստաբանների պալատը Ֆրանսիայում մեծ ազդեցություն ունի: Այն նաև ողջ աշխարհում փաստաբանների իրավունքն է պաշտպանում, ինչպես նաև մասնակցում է օրենքների փոփոխություններին: Օրինակ՝ ահաբեկչության հետ կապված այս օրերին մեր օրենքներում զգալի փոփոխություններ են իրականացվում, փաստաբաններն ակտիվորեն մասնակցում են գործընթացներին, իրենց դիրքորոշումը ներկայացնում:

- Իսկ համեմատություն կարո՞ղ եք անցկացնել երկու երկրների փաստաբանական համայնքների միջև:

- Ես բավականին իրազեկ չեմ Հայաստանի փաստաբանական համայնքի գործունեությունից: Այդուհանդերձ, հայ փաստաբանների հետ զրույցում որոշ խնդիրներ առանձնացրել եմ: Օրինակ՝ պարզ բան՝ փաստաբանի համազգեստը դատարանում, Ֆրանսիայում սև շապիկ, պատմուճան են հագնում: Ես գտնում եմ, որ դրա կարիքը կա նաև Հայաստանում: Սա միայն սիմվոլիկ չէ, սևը խորհրդանշում է արդարադատություն և հավասարություն, անգամ Պաղեստինում են դա կրում: Սա նշանակում է հավասարություն բոլոր կողմերի՝ փաստաբանի, մեղադրողի կամ դատավորի միջև: Այդ շապիկի տակ կարող է լինել հազար դոլարանոց կամ պարզ հագուստներ, բայց բոլորը իրար հավասար է: Այսինքն՝ բոլորս նույն մակարդակի ենք ու բոլորս մեկ նպատակ ունենք՝ արդարադատություն: Սա շատ կարևոր հանգամանք է:

- Դուք շոշափեցիք առանցքային մի հարց, այն է՝ կողմերի հավասարությունը: Ցավոք, մեր երկրում շատ փաստաբանները բարձրաձայնում են այս սկզբունքի խախտման մասին, նաև խոսք է գնում կաշառքի վերաբերյալ, ի՞նչ եղանակներով են Ֆրանսիայում պայքարում այս արատավոր երևույթների դեմ:

- Ֆրանսիայում 18-րդ դարից առ այսօր մեծ դատավարություններ ենք ունեցել, դրանք հիմնական դատերն են, որտեղ իրապես պայքարի մեջ են մտնում փաստաբանն ու դատախազը: Այդ դատերը գրավում են ժողովրդի, ինչպես նաև միջազգային կարծիքը: Նման դատեր Հայաստանում ես չեմ տեսել: Քանի դեռ Հայաստանում նման դատեր չեն եղել, առաջ չեք գնա: Սա ժողովրդավարություն է, մինչև որ պայքարը հաջողությամբ չպսակվի, փաստաբանի դերը երկրորդական կլինի: Մենք պետք է հասկանանք, որ փաստաբանը ոչ թե հաճախորդի, այլ հանրային ազատությունների պաշտպանն է:

- Ու այդ պայքարը նաև կնվազեցնի՞ կոռուպցիան:

– Տեղյակ չեմ կոռուպցիայի վերաբերյալ Հայաստանի իրավիճակին: Ո՞րն է խնդիրը, դատավորները փող են վերցնում:

– Օրինակ՝ 2013թ. Մարդու իրավունքների նախկին պաշտպան Կարեն Անդրեասյանը հրապարակեց մի զեկույց, որում հստակ խոսվում էր դատական համակարգում կոռուպցիոն երևույթների մասին: Ընդ որում՝ ըստ զեկույցի՝ կաշառքի չափը կախված է հայցագնի 10%-ից: ՄԻՊ գրասենյակը անցկացրել էր անանուն հարցումներ, հարցվածների մեծ մասը փոխանցել է, որ առաջին ատյանում վերցնում են 500-10.000 ԱՄՆ դոլար կաշառք, Վերաքննիչ դատարանում՝ 2000-15.000, իսկ Վճռաբեկ դատարանում՝ 10.000-50.000 դոլար՝ կախված գործի բնույթից:

– Խենթություն է: Դատավորները պետք է դատապարտվեն, փաստաբանը պետք է դատապարտվի, մինչև բանտ չնետվեն, որևէ բան չի փոխվի:

– Իսկ Ֆրանսիայի դատական համակարգում կոռուպցիա կա՞:

– Չեմ կարող ասել, որ չկա: Խոսակցություններ գնում, ես իմ աչքով չեմ տեսել: Ամեն դեպքում, չեմ կարծում, որ խոսակցությունները պտտվում են քրեական կամ քաղաքացիական դատավարությունների շուրջ, բայց մյուս գործերով, որոնք վարում են ոչ թե պրոֆեսիոնալ, այլ ընտրված դատավորներ, օրինակ՝ գործատուների իրավունքներին առնչվող, գործատուներ, որ դատի կտան իրենց աշխատողներին, այս գործերով պրոֆեսիոնալ դատավորներ չեն: Անգամ առևտրային իրավունքի դատավորները նույնպես պրոֆեսիոնալ չեն: Նրանք բիզնեսի ոլորտից եկած անձիք են: Այդուհանդերձ, մի կարծեք, թե Ֆրանսիայում ամեն ինչ ճերմակ է, Հայաստանում՝ սև, հատկապես, որ գումարները շատ մեծ են:

– Ի՞նչ իրավական լուծումներ եք տեսնում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար:

– Նախ ասեմ, որ շատ-շատ ենք ուշացել: Օրինակ՝ հրեական դատական պատմությունը, նրանք հաջողել էին Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում Նյուրեմբերգի դատավարություն ունենալ, սա մեկ հաջողություն էր, նորմալ պրոցես էր: Մեր ձախողումն այն էր, որ Սևրի պայմանագրի խոստումը չէր հարգված, միջազգային դատարանը, որ պատմության մեջ առաջին անգամ կարող էր լիներ, չուզեցին կազմել ու Օսմանյան կայսրության վերջին քրեական դատարանները դատեցին Թալեաթ փաշային ու մյուսներին, այսինքն՝ միջազգային դատարան չենք ունեցել: Սա մեծ խայտառակություն էր: Օրինակ՝ մեզ Ֆրանսիայում ժխտողականներն ասում են, որ միջազգային դատարանը չի լուծել այս հարցն, ուրեմն օրենքը չի կարող ուժի մեջ մտնել: Այսինքն՝ բոլորովին շրջել են հարցը, եվրոպացիների, ռուսների հանցանքով այդ դատը չենք ունեցել 1920թ.-ին: Սա մեծ խնդիր է: Բացի այդ, ես տեսնում եմ, որ զոհերի ընտանիքները արդեն բավականին ծեր են, նրանց վկայությունները պետք է դատարանի առջև բերել: Մեր հույսը դրել ենք մահմեդականների վրա, որ ճանաչեն, ինչը ոչ իրատեսական է թվում: Հարկավոր է ամեն ինչ հաշվարկել՝ քրեական, քաղաքացիական հարցերը, հողային խնդիրները:

– Տարբեր գիտնականների, ոլորտի մասնագետների, փաստաբանների հետ մենք խոսում ենք հայ իրավաբանական մտքի զարգացման և դրան խոչընդոտող երևույթների մասին: Արդյոք հայկական իրավաբանական միտքը տարածված է նաև միջազգային հարթակում, տվյալ դեպքում Ֆրանսիայում:

– Ես չեմ լսել: Մատչելի չէ, պետք է ստեղծել, տարածել ու մի քանի լեզուներով թարգմանել: Այնուամենայնիվ տարածված չէ Ֆրանսիայում:

- Ի՞նչ նախագծեր եք իրականացրել կամ նախատեսում իրականացնել Հայաստանում Փաստաբանների պալատի և իրավաբանական ընկերությունների հետ:

– Նախորդ տարի պալատում հատուկ հանձնախումբ ստեղծեցինք: Սա 20 տարվա պայքար էր, հանձնախումբը կոչվում է Փարիզ-Հայաստան: Այս հանձնախմբի միջոցով արդեն սկսել որոշ աշխատանքներ: Հանձնախումբը հիմք է, որ կոնկրետ դասախոսություններով հանդես գան կողմերը: Նման մի հանդիպում նախատեսված է հուլիսին, երբ Արա Զոհրաբյանը կգա Ֆրանսիա: Այս կապերը պետք է ամրացնել:

Հարցազրույցն ու լուսանկարները՝ Գևորգ Թոսունյանի
Իրավաբան.net

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })